

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆԱԽԱՍԵՍՐՈՊՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հոգևոր մշակույթի կարևոր մարզերից է պատմագրությունը: Նախամեսրոպյան հայ պատմագրության հարցը լրջորեն չի քննարկվել գիտական գրականության մեջ (բացառություն է կազմում Մարաբասի ու նրա մատյանի առեղծվածը): Դրա պատճառն, անշուշտ, փաստերի պակասությունն է եղել: Փաստերը այսօր էլ բաղմամբիլ չեն, սակայն շատ նշանակալից են պատմագրության դուրսությունը մատնշանշող հանդամանքները, նրա գոյությունը «ուղեկցող» պարպանքները: Այդ պարագաները, կարճ ասած, երկուսն են: Առաջին, հայ պետականության այն բարձր զարգացումը մ. թ. ա. II—I դդ. Արտաշեսյանների օրոք և հետագայում էլ՝ Արշակունիների օրոք, որը պետք է որ ծներ պատմագրության տալիս մասնական տեսլականներ: Երկրորդ, V դարում հայ պատմագրության այն բուռն ծաղկումը, որ իսկական պայթյունի էր նման, և որը անհնարին է պատկերացնել առանց նախորդող շրջանում պատմագրական մտքի արգասիքների աստիճանական կուտակման:

Հայ պետականության գոյացումը մենք արդեն չենք կապում, ինչպես առաջ, Աբեմենյան տերության փլուզման ժամանակաշրջանի և փաստի հետ, այլ դիտում ենք որպես մի երևույթ, որ ծայր է առել Ուրարտուի անկումից հետո, Մեդիայի ծաղկման շրջանում: Սրան հաջորդած՝ Աբեմենյանների տիրապետության երկուհարյուրամյա ժամանակաշրջանը ներկայանում է որպես Հայաստանի հետագա, թեև ոչ շատ եռանդուն, զարգացման շրջան նաև պետական տոմսով: Աբեմենյանների վերացումից հետո Հայաստանի ժառանգական ուսուցիչները՝ հայ, կամ համենայն դեպս արդեն հայացած Երվանդյանները, մնացին ու հարապեցին այստեղ որպես ինքնուրույն թագավորներ: Սրանց հաջորդեցին Արտաշեսյանները, որոնց ժամանակ Հայաստանը միավորվեց, հզորացավ, դարձավ հին աշխարհի կարևորագույն քաղաքական ուժերից մեկը՝ երրորդը Միջերկրականի ու Առաջավոր Ասիայի երկրների միջև՝ Հռոմից ու Պարթևստանից հետո:

Արտաշեսյան հաբստության հիմնադիր Արտաշես Ա-ի՝ հայ ժողովրդի ծնած խոշորագույն պետական ու ռազմական գործիչներից մեկի ժամանակը (մ. թ. ա. 189—160 թթ.) բաղմամբիլ բարեփոխությունների ու նորամուծությունների շրջան էր՝ թե՛ ռազմա-քաղաքական և թե՛ տնտեսական-մշակութային բնագավառներում: Հատկապես նշելի է Արտաշես Ա-ի շահագրգռությունը՝ Հայաստանի անցյալը իմանալու, որը, բնականաբար, զրոկորվում էր Արտաշեսին նախորդած տիրակալների, ինչպես և իր տոհմի ծագումնաբանական ծառի հանդեպ նրա ցուցաբերած հետաքրքրությամբ: Նման հետաքրքրությունը իհարկե ուներ մեծ գործնական նշանակություն՝ պետության պատմական իմքերը հաստատելու և ամրապնդելու առումով, ինչպես և գործնական նշա-

նախնություն ունենալու հետաքրքրության մարմնավորումներից մեկը՝ Արտաշեսի օրոք սահմանված՝ թագավորական նախնիների պաշտամունքը, այդ «քաղաքական կրոնը», որ կոչված էր անհասանելի կացուցանելու միապետի իշխանության հեղինակությունը:

Արտաշեսի թագավորությունը շատ հարմար ժամանակաշրջան է երևում հայկական հողի վրա պատմագրության սկզբնավորման համար, և գուցե հենց այդպես էլ եղել է, թեև դրա մասին որոշակի տեղեկություն չկա: Համենայն դեպս, հայկական գրերի բացակայությունը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ դրան: Գոյություն ունենալու արդեն երկու դարավոր լեզու՝ արամեերենն ու հունարենը, որոնք այդ ժամանակ մրցում էին իրար հետ Հայաստանի վարչական լեզու լինելու համար: Դրանց հուշարձաններն են Արտաշեսի արամեերեն արձանագրությունները և նույն այդ ժամանակներից պատկանող՝ Արմավիրի հունարեն արձանագրությունները: Երկու այդ լեզուներով էլ կարող էին ստեղծվել պատմագրական կամ ժամանակագրական երկեր:

Այսպիսիների ստեղծման մասին, սակայն, մեր ունեցած առաջին տեղեկությունները վերաբերում են Արտաշեսի թոռան՝ Տիգրան Բ-ի ժամանակին (մ. թ. ա. 95—55 թթ.): Տիգրանը ակներևաբար հունական առաջավոր մշակութի ու նրա՝ Հայաստանում տարածման ջատագով է եղել, և դրա բաղմամբ՝ զրահավորման մեկն էլ այն էր, որ նրա շրջապատում փոքր թիվ չէին կազմում տարբեր բնագավառների՝ գրականության, արվեստի, քաղաքականության, ռազմի հույն գործիչները: Աղբյուրները դրանցից մեկ հասցրել են գրող ու քաղաքական գործիչ Մետրոդորոս Ալեքսիացու, հետո ու գրող Ամփիկրատես Աթենացու, Կալլիմաքոս զորավարի անունները, հույն դերասանների մասին հիշատակությունը միայն¹, բայց դրանց թիվը, հավանաբար, շատ ավելի է եղել:

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ ուշադրությունը սեռվում է առաջին հերթին Մետրոդորոս Ալեքսիացու վրա: Սա հելլենիստական դարաշրջանի համար շատ տիպական մի խավի՝ թափառաշրջիկ մտավորականության ներկայացուցիչն էր: Դրանք անցնում էին երկրից երկիր, արքունիքից արքունիք, հազուրդ տալով իրենց գաղափարների պրոպագանդան և իրականացման ծարավին, պարզապես նաև ապրուստ վստահելու նպատակով, բայց և շատ տեղերում թողնելով իրենց գործունեության դրական հետքերը:

Մետրոդորոսը ծագում է Տրովադայի Ալեքսիս քաղաքից, ծնված պիտի լինի մ. թ. ա. 130—120-ական թթ.: Երկար ժամանակ ապրել ու գործել է Քաղկեդոնում: Այստեղ նրան հանդիպել է Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատոսը և հրավիրել իր մոտ ծառայության: Մետրոդորոսը Պոնտոսում մեծ պաշտոնների է հասել և բարձր հեղինակություն վայելել: Նա եղել է գերագույն դատավոր, որի վճիռները անբեկանելի էին, կրել է «արքայի հայր» պատվավոր տիտղոսը: Հռոմի հետ իր ռազմական բախումներից մեկի ժամանակ Միհրդատը ուղարկել է նրան որպես պատվիրակ Տիգրան Բ-ի մոտ, օգնություն խնդրելու (հավանորեն գա տեղի է ունեցել կամ Երկրորդ Միհրդատյան պատերազմի ժամանակ՝ 83—82 թթ. կամ Երրորդ պատերազմի սկզբին՝ 74 թ.): Պատվիրակը մեծ համակրանք է ցուցաբերել Տիգրանի նկատմամբ, բարի խորհուրդներ տվել նրան ի վնաս Միհրդատի, և ըստ երևույթին հենց այդ ժամանակ էլ հրա-

¹ Plut., Luc., 22, 29, 32.

վիրվել է հայոց արքունիքը: Մ. թ. ա. 70 թ., հայ-հռոմեական պատերազմի նախօրեին, Մետրոդորոսը Տիգրանի կողմից ուղարկվում է Միհրդատի մոտ և ճանապարհին մահանում կամ սպանվում: Տիգրանը միջոցներ չի խնայում ներքան փառքով ու շքեղութեամբ հուղարկավորելու համար²:

Սոսկական բախտախնդրի որակումից, որ կարող էր կաշել Մետրոդորոսին նրա կենսական ուղու փոփոխականութեան նկատմամբ, նրան բոլորովին փրկում է իր վաստակած «Հոմեռոմայոս» (Misoromaeus) մականունը, որի մասին հաղորդում է Պլինիոս Ավագը, և որը աներկբայելիորեն վկայում է Մետրոդորոսի քաղաքական սկզբունքների որոշակիութեան մասին³:

Մետրոդորոսը բազմակողմանի ունակութունների ու գիտելիքների տեր անձնավորութիւն է եղել՝ քաղաքական գործիչ, փիլիսոփա, հռետոր, բնագետ, պատմաբան: Պլուտարքոսն անվանում է նրան «այդ բազմագիտակ», իսկ Ստրաբոնը խոսում է նրա գրվածքների ուրույն, ինքնատիպ, զարմանք առաջացնող ոճի մասին: Մետրոդորոսի ստեղծագործութիւններից մեկ հասել են երեքի անունները միայն՝ «Սովորութիւնների մասին», «Անբան կենդանիների բանականութիւն ունենալու մասին» և «Տիգրանի մասին»⁴:

Մեկ հետաքրքրողն, անշուշտ, այս վերջինն էր, որ դժբախտաբար մեկ չի հասել, նրանից պահպանվել է սոսկ մի աննշան նախադասութիւն, որը ոչ մի պատկերացում չի տալիս գործի բովանդակութեան մասին⁵: Դրա մասին կարելի է դատել միայն ենթադրաբար: Տիգրանի պատմութիւնը Մետրոդորոսը կարող է հասցրած լինել մինչև իր մահվան թվականը՝ 70 թ. մ. թ. ա.: Ասել է, թե նա նկարագրել է Տիգրանի թագավորութեան առաջին, աշխարհակալական շրջանը: Սրա համեմատ էլ երկր պետք է որ ջատագովական, ներբողյանի բնույթ կրած լինի, մանավանդ, որ գրված է եղել անշուշտ, իր՝ Տիգրանի պատվերով: Միգուցե նաև այն ունեցել է հսկահռոմեական գունավորում, որ երևում է հեղինակի կրած մականունից: Հավանաբար, ըստ ընդունված սովորութեան, երկր, բացի Տիգրանին վերաբերող հիմնական մասից, ունեցել է նաև ներածական բաժին: Այս բաժինը կարող էր սկսվել որքան ասես հեռից, ասենք, հայ ժողովրդի ծագման մասին տեղեկութիւններից, որոնք, իր ուղղութեան ու ըմբռնումների համեմատ, հեղինակը կարող էր քաղել կամ տեղի բանավոր պրուքներից, կամ էլ հունական մատենագրութիւնից: Ներածական բաժինը կարող էր սկսվել (կամ նրա մեջ կարող էր շեշտված լինել) նաև Տիգրանի դինաստիայի սկզբնավորումից, նրա հիմնադիր Արտաշեսի բնութագրից, ոչի մասին ևս տեղեկութիւններ կարելի էր ստանալ թե՛ տեղում, թե՛ հունական մատենա-

² Strab., XIII, I, 55; Plut., Luc., 22. Մետրոդորոսի մահվան հանգամանքների մասին հնում երկու կարծիք է եղել: Ըստ Պլուտարքոսի, նա սպանվել է Միհրդատի հրամանով, որը ատելութեամբ էր լցված իր նախկին մերձավորի նկատմամբ, իսկ սպանութեան առիթը իբր այն է եղել, որ Տիգրանը անզգուշաբար հայտնել է Միհրդատին Մետրոդորոսի՝ ժամանակին իրեն տված խորհուրդների մասին: Ըստ Ստրաբոնի, կարծիք է եղել նաև, որ Մետրոդորոսը հիվանդութիւնից է մահացել:

³ Plin., Nat. hist., XXXIV, 16, 2.

⁴ Strab., XVI, 4, 16; Cicero, De orat., II, 88, III, 20; Athen., IX, 391a; Schol. Apoll. Rh., IV, 133, Fragmenta historicorum graecorum, III, էջ 204:

⁵ Μετρόδορος: ἐν πρῶτῳ τῶν περὶ Τιγράνων τῶν ἑρμῶν τὰ Ἀρτέμιον φεσὶ λέγεσθαι «ὡς οὐκ ἔστι, որ Մետրոդորոսը Տիգրանի մասին (պատմութեան) առաջին գրքում Թերմոդոն (գետը) անվանում է Արարս» (Schol. Apoll. Rh., IV, 133):

գրությունից, ասենք Պոլիբիոսի «Պատմությունից»⁶։ Այս բոլորը թեև ենթադրություններ են, բայց ամենևին անհիմն չեն, ինչպես կերևա հետագա շարադրանքից։

Կարևոր է նաև ընդգծել արդեն նշված այն հանգամանքը, որ Մետրոդորոսի գործը հավանաբար հայոց արքայի պատվերով է գրվել։ Տիգրանը անհրաժեշտություն է դրացել հավերժացնելու իր գործերը, իր պետության ստեղծման պատմությունը։ Այս անհրաժեշտության զգացման առջև (որի պետական նշանակությունը չի նվազում, ինչքան էլ որ այդ զգացումը վերադրենք նաև Տիգրանի փառասիրությանը) հետին պլանի վրա է մղվում այն հանգամանքը, որ պատվիրակատարը հույն է եղել, հունարեն է գրել և այլն։ Մետրոդորոսը սոսկ միջոց է եղել, և նրա գրած երկը մենք առանց վարանելու կարող ենք համարել տեղական, հայ պատմագրության արգասիք։

Այս թեզը հաստատվում է նաև այն փաստով, որ Մետրոդորոսի գործը կողիացած, էդակի երևույթ չմնաց հայ իրականության մեջ, այլ գտնվում էր շարունակությունը, և շարունակողն արդեն հույն չէր, այլ հայ, թեև տակավին պրոլեթարիատ էր հունարեն։ Այդ շարունակողն է հայոց Արտավազդ Բ թագավորը, Տիգրան Բ-ի որդին և հաջորդը (մ. թ. ա. 55—34 թթ., մահը՝ 31 թ.), որը, չցանկանալով դիմել և կամ հնարավորություն ունենալով շրջանադարձի օգնությամբ, իր ձեռքն է վերցնում գրիչը, նշանավորելով, այսպիսով, հայկական հողի վրա պատմագրության դարգացման մի նոր փուլ։ Պլուտարքոսը հաղորդում է, որ «Արտավազդը գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնց մի մասը պահպանվել է»⁷։

Անտարակույս հենց վերը հիշատակված Մետրոդորոսը, Ամփիկրատեսը և մեզ տեղեկություն անհայտ մնացող նմանօրինակ այլ անձինք են եղել Արտավազդի ուսուցիչները լեզուների, գրականության, ճարտասանության, թատերական արվեստի, պատմագիտության և այլ բնագավառներում։ Եվ ահա հանդես է գալիս մեզ հայտնի հայ առաջին մտավորականը, դիմված ժամանակի առաջատար քաղաքակրթության բոլոր նվաճումներով։ Իրավունք ունենք մտածելու նաև, որ նա միակը չէր և նրա շրջապատում կային իր նմանները։

Սակայն սիսալ կլինեիր պատկերացնել Արտավազդին որպես «ուսյալ» իշխողի, զեղեցիկ աշակերտների սիրողի, որին դիրքը և կենսական պայմանները առատ հնարավորություններ էին ընձեռում իր սիրած գործով զբաղվելու։ Ոչ։ Իսկապես շրջանը ահեղ էր և միանգամայն այլ հատկություններ և ունակություններ էր պահանջում հայոց թագավորից։ Հայաստանի բազմադարյան պատմության մեծագույն մասը բնութագրվում է նրա արևմուտքից ու արևելքից երկու հզոր, իրար հակառակորդ պետությունների միջև սեղմված լինելու հանգամանքով։ Պետությունները փոխվել են, բայց նրանց ակնկալությունները մնացել են նույնը՝ ունենալ Հայաստանը դաշնակցի, իսկ ավելի լավ է՝ հպատակի դերում, որը երկրի աշխարհագրական պիտքի և այլ հանգամանքների նկատմամբ դիտվում էր որպես ախոյանի դեմ մղվող պայքարի հաջողության կարևոր գրա-

⁶ Հմմտ. Polyb., XXV, 2; XXXI, 17. Շատ հավանական է, որ Պոլիբիոսի «Պատմություն» մեզ հասած գրքերում ևս կարևոր նյութեր են եղել Արտաշեսի մասին։ Մեր կարծիքով Արտաշեսի մասին հաղորդող մի շարք հեղինակների (օրինակ, Դիոդորի, Ապպիանոսի, Պորփյուրի և ուրիշների) մեզ հասած հաղորդումների իրական աղբյուրը Պոլիբիոսի «Պատմությունն» է եղել։

⁷ Plut., Crass., 33.

վական: Հայաստանն, այսպիսով, անընդհատ ներգրավվել է հաճախ նաև իրեն վերաբերող քաղաքական բախումների ու արյունահեղ պատերազմների մեջ, որոնք սահմանարար հավերժներ են բերել ժողովրդին ու երկրին:

Արտավազդն էր, ահա, որին վիճակվեց կրել այդ դառն իրավիճակի սկիզբը գուժող պարթևների դեմ ուղղված հռոմեական հրկու արշավանքների (Կրասոսի՝ մ. թ. ա. 52 թ. և Անտոնինոսի՝ մ. թ. ա. 37 թ.) ծանրությունը: Նա էր, որ պիտի առաջինը վճռեր Հայաստանի անկիւղը՝ կռանի և սալի միջև, և այդպիսով հիմք դնէր այն ճկուն քաղաքականությանը, այն հատուկ դիվանագիտությանը, որը ստիպված պիտի լինէին, որպես բացարձակ գիմագրություն ալտերնատիվ, հետադադում վարել Հայաստանի առաջնորդները երկիրն ու ժողովուրդը ավերումից ու ոչնչացումից հնարավորին չափ դերժ սպասելու համար: Բայց ծանրությունը կարող ուսերի վրա էր ընկել Երկրին սպառնացող վտանգի առջև շրջահայաց ու խորամանկ, և վսեմ ու աննկուն՝ առանձնապես իրեն սպառնացող վտանգի հանդիման. այսպիսին է հառնում Արտավազդը նրա մասին պատմող բարենպաստ ու անբարենպաստ գիրքավորված հեղինակների հիշատակություններից: Արտավազդը կատարեց իր դժվարին պարտքը և կատարեց այն իր կյանքի գնով:

Այս բոլորն ասվում է Արտավազդին նաև որպես պատմագիր բնութագրելու համար, որովհետև ըստինքյան հասկանալի է, որ նույն ըմբռնումներով ու հույզերով պիտի տողորված լինէին նրա գրվածքները: Այսքանը հաստատապես կարելի է ասել դրանց գաղափարական ուղղվածության մասին: Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ բովանդակությանն ու ժամանակագրական ոնդրկմանը, ապա այստեղ ստիպված ենք ոտք դնել ենթադրությունների ուղին. քանի որ Արտավազդի գրվածքները մեզ չեն հասել: Արտավազդը գրած պիտի լինի իր ժողովրդի, իր գինաստիայի սկզբնավորման մասին, նրա հիմնադրի, իր հոր, իր սեփական ժամանակի իրադարձությունների մասին: Նրան աղբյուր կարող էին ծառայել թե՛ ժողովրդական, թե՛ գինաստիական-տոհմային ավանդությունները և թե՛, ինչպես ասվեց Մետրոդորոսի կապակցությամբ՝ հունական գրականությունը:

Հատուկ ուշադրության է արժանի Պլուտարքոսի այն վկայությունը, թե Արտավազդի գրվածքները պահպանվել են մինչև իր օրերը՝ մ. թ. II դարի սկզբները: Եթե դրանք հարատևել են, այդպիսով, առնվազն 150 տարի (իսկ թե դրանից հետո որքան՝ այդ մեզ հայտնի չէ), ապա բովանդակալից ու հետաքրքրական պարծել պիտի եղած լինեն: Գիտության մեջ կարծիք է հայտնվել նաև, թե Պլուտարքոսը ոչ միայն հիշատակել է Արտավազդի պատմական երկերը, այլև օգտագործել դրանք որպես աղբյուր Կրասոսի կենսագրությունը, նրա արևելյան արշավանքը, հատկապես հառանի ճակատամարտի դրվագը շարադրելիս: Ինչևիցե, մի բան հաստատ է, որ Արտավազդի գործերը որոշ ժամանակ շրջանառության մեջ են եղել հելլենիստական գրականության մեջ:

Սակայն դրանք անշուշտ և, առաջին հերթին, ընթերցվել են Հայաստանում և այստեղ ունեցել են այն նշանակությունը, որ Արշակունիների ժամանակ սպասանել են Արտաշեսյանների օրոք ծայր առած տեղական պատմագրության ավանդույթը, ու թերևս օրինակ և զրդապատճառ ծառայել այդ տիպի նո-

⁸ A. H. Heeren, Vermischte historische Schriften, Bd. III, 1821, էջ 412 (տե՛ս K. B. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 13),

ըստ որի զործերի ստեղծման համար՝ Արշակունյաց արքունիքի հովանու ներքո՝ Արքունիքը սակավին մեռավ իր մշակույթի զործիչների նախասիրած հավաքատեղի նաև այս նոր պարաշրջանում, ինչպես թույլ է տալիս եզրակացնել ժամանակի մասին խիստ կցկտուր տեղեկությունների մեջ իմիջիայլոց պահպանված մի վկայություն, ըստ որի մ. թ. II դարի կեսերին իշխած հայոց թագավոր Սոհեմոսի (140—161 թթ.) արքունիքում է ապրել ու ստեղծագործել սիրիացի Ֆամրիքոս գրողը, որ հայտնի էր իր «Բարեկունականք» վեպով⁹:

Դարավոր պատմագրական ավանդույթին ուղեկցող երևույթներից մեկն էլ սախամեսրոպյան շրջանում պիտի լինեին արքունի գիվաններում պատմական ընույթի այլևայլ նյութերի՝ հրովարտականների, նամականների, պարզեցողների, զեկույցների, հենց պատմությունների և ուրիշ թղթերի աստիճանական կուտակումը: Արշակունյաց Հայաստանում նման արքունի գիվանի գոյության անուղղակի, բայց և անառարկելի ապացույցներն են մեզ հասած թագավորական (հունարեն լեզվով գրված) արձանագրությունները: Դրանք այնպիսի ընույթի են, որ պետք է իրենց մագաղաթյա պատճեններն ունենային արքունի գրասենյակի գիվանում:

Ահա Տրդատ Ա Արշակունու Բառնի հունարեն արձանագրությունը. սա տիպիկ գրասենյակային փաստաթուղթ է: Այն մի զործի կատարման վավերացում է՝ վկաների ընդգրկմամբ, ըստ որում նախապես պատրաստված արձանագրության մեջ բաց էին թողնվում զործը կատարողի և վկաների անունները, որոնք և լրացվում էին զործն ավարտվելուց հետո¹⁰: Ապարանի հունարեն արձանագրությունը արքայական մի պարզեցողի է, որով Տրդատ (Բ թև՝ Դ) թագավորը նախարարական տներին մեկին մի բնակավայր է պարզեցում¹¹: Անկասկած, սրանց մագաղաթյա պատճենները պետք է իրենց տեղը գտնեին արքունի գիվանում:

Էլ ավելի բնորոշ է Տիգրանակերտի հունարեն արձանագրությունը: Սա մի թագավորական ուղերձ-հրովարտակ է Տիգրանակերտ քաղաքին, որ փորագրվել է քաղաքի պարսպի վրա՝ դարպասին կից: Ուղերձի հեղինակ հանդիսացող արքայի անունը չի պահպանվել, բայց ամենայն հավանականությամբ դա Տրդատ Բ-ն է՝ քրիստոնեությունն ընդունելուց առաջ¹²:

Այս վավերագրին հետաքրքրական զուգահեռ է կազմում նույն Տրդատ Բ-ի՝ Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ հանդես եկող հրովարտակը հայոց աշխարհին¹³: Այն սկսվում է այսպիսի բառերով՝ «Ողջուն հասնալ և շինութիւնդիցն օգնականութեամբ...», որոնց հունարեն տարրերակը πρὸς τὴν γένεσιν αὐτοῦ τῶν θεῶν θεῶν βουλήσιν¹⁴ իր արձագանքն է գտնում Տիգրանակերտի արձանագրության մեջ՝ τῇ προγενεῇ καὶ βουλήσιν τῶν θεῶν¹⁵: Սրանով, եթե չի էլ հաս-

⁹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 38—39:

¹⁰ К. В. Тревер, *уշվ. աշխ.*, էջ 174 և հտ.:

¹¹ М. И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, «Анийская серия», № 6, СПб, 1911.

¹² Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, էջ 81—82:

¹³ Ագաթանգեղոս, 127:

¹⁴ Agathangelus und die Akten Gregors von Armenien, Neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887, էջ 30:

¹⁵ Г. Х. Саркисян, *уշվ. աշխ.*, էջ 82, D, 5:

տատվում Ազաթանգեղոսի հաղորդած հրովարտակի վավերականությունը (նման մի հետևություն չափազանց փութկոտ կլիներ), ապա համենայն դեպս խիստ հավանական է դառնում, որ դրա հետմեմբրության շարադրողին ինչ-որ ուղիներով հասել են իսկական նախաքրիստոնեական հրովարտականների ձևավորման ավանդները, միգուցե և հենց հրովարտականների օրինակները:

Նույն այդ երևույթի առավել հետաքրքրական դրսևորմանն ենք հանդիպում վաղ միջնադարյան զրականության մի այլ նմուշի մեջ՝ Դա ալսպես կոչված «Կեղծ-Ազաթանգեղոսի» (որին հաճախ այդ անունն են տվել գիտնականները՝ ի տարբերություն հայոց դարձի պատմության հենց նոր հիշատակված հեղինակ Ազաթանգեղոսի) վիմական արձանագրության ներածական տողերի մի «պատճեն» է, որ հասել է մեզ Անանուն Բանաքաղի՝ Մարաբա Մծուրնացու մատյանից ուղղված քաղվածքում, իսկ վերջինս էլ արտագրած է եղել վեմի վրա հունարեն լեզվով արված բուն արձանագրությունից: Ահա այն. «Ես Ազաթանգեղոս դրիշ գրեցի և վերայ արձանիս այսօրիկ իմով ձեռամբս զամս առաջին թագավորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»¹⁶:

Պետք է ասել, որ արձանագրության վավերականության ու նրա հեղինակ Ազաթանգեղոսի անձի նկատմամբ գիտության մեջ ծագած բազմաթիվ կասկածները կապված են եղել մեծ մասամբ հենց այդ Մարաբայի առեղծվածային թվացող կերպարի հետ: Մարաբայի խնդրին կանգնողականք սույն հոդվածի վերջում, իսկ այժմ բավարարվենք նշելով, որ արձանագրությունը, վավերական լինի այն թե սոսկ գրական, իր մեջ ոչինչ տարօրինակ բան չի պարունակում, այլ ընդհակառակը, հայոց առաջին թագավորների մասին արքունի դիվաններում պարունակված նյութի իր հիշատակմամբ լրիվ ձայնակցում է նախաձեռնողության պատմագրության և արքունի դիվանների մասին վերը շարադրված վիաստերին:

Նախամեմբրության հայ պատմագրության վերաբերյալ կարևոր և հետաքրքրական հաղորդումների ու նյութերի ենք հանդիպում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Խորենացին, ինչպես գիտենք, բազմիցս հիշատակում է հր օգտագործած աղբյուրները Այդպիսի հիշատակումները, հատկապես նրա նրկի I և II գրքերում, այսինքն՝ նախաքրիստոնեական շրջանին վերաբերող շարադրանքում, մի քանի տասնյակի են հասնում: Սրանցից մեզ անհրաժեշտ է առանձնացնել այն հիշատակությունները, որոնցով Խորենացին վկայակոչում է հատկապես հայկական հողի վրա ստեղծված պատմագրական երկերը. մի կողմ թողնելով այն ամենը, ինչ նա հաղորդում է օտար հեղինակների և Հայաստանից դուրս ստեղծված մատյանների՝ Հայաստանի ու հայերի մասին հաղորդածի վերաբերյալ:

Այս առումով դասակարգելով նյութը, մենք մեր քննության ենթակա խմբում գտնում ենք հետևյալ միավորները. ա) Մար Աբաս Կատինայի մատյանը և բ) «մեհենական պատմություններ»: Դիմենք նախ «մեհենական պատմություններին» խնդրին:

Դատելով Խորենացու համապատասխան տվյալներից, պատմագրությունը Հայաստանում, արքունիքից զատ, մշակվել է նաև մեհյան-տաճարներում, բրմության միջավայրում: Հանրահայտ է այն հսկայական դերը, որ

16 «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 2:

խաղացել են տաճարներն ու քրմությունը Հին Արևելքի և հելլենիստական երկրների տնտեսական-հասարակական և մանավանդ հոգևոր կյանքում: Դրանք եղել են նաև մշակույթի, մասնավորապես գիտության, պրի ու գրականության կենտրոններ: Բաբելական տաճարներում մաթեմատիկական և աստղաբաշխությունը իրենց աննախընթաց վերելքն են ապրել¹⁷: Հայտնի են և այդ տաճարներում կազմված սեպագիր ժամանակագրությունները, որոնք դարեդար գրանցվելով, կարևորագույն վավերական տեղեկություններ են պահպանել մ. թ. ա. I հազարամյակի Առաջավոր Ասիայի պատմության մասին, ներառյալ և հելլենիստական դարաշրջանը¹⁸: Բաբելոն քաղաքի Մարդուկ աստծու տաճարի քուրմ Բերոսոսը, որ ապրել է մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսում—III դարի սկզբներում, սեպագիր աղբյուրների հիման վրա հունարեն լեզվով կազմել է իր երկրի պատմությունը, որը տարածվել է հելլենիստական աշխարհով մեկ¹⁹: Նույնպիսի գործ է կատարել Եգիպտոսում Բերոսոսի ժամանակակից, Հելիոպոլիս քաղաքի տաճարի քուրմ Սանեթոնը²⁰: Երկուսին էլ, ի դեպ, գիտե հորենացին²¹:

Ստրաբոնը, նկարագրելով իր ժամանակվա փոքրասիական երկրների Վապսդոլկիայի, Պոնտոսի բազմաթիվ տաճարները, հիշատակում է նաև Հայաստանի տաճարները. «...հայերը,— գրում է նա,— արտակարգ եռանդով են պաշտում Անահիտին, որին տաճարներ են կառուցված բազմաթիվ տեղերում և, մանավանդ, Եկեղիքում»²²: Հայտնի է, որ դիցուհու անունով գավառը կոչվել է Անահտական: Անահիտի տաճարից բացի, տեղեկություններ են պահպանվել նաև մի շարք այլ, անշուշտ նախահելլենիստական ծագում ունեցող, տաճարների մասին, որոնք նվիրված էին Արամազդ, Վահագն, Տիր, Նանե, Միհր և այլ աստվածների: Դրանցից և ոչ մեկը առայժմ պեղված չէ, ուստի և դժբախտաբար այդ բոլորի մասին մենք պատկերացում ունենք այն չափով միայն, ինչ չափով թույլ են տալիս քրիստոնեական բովով անցած հատուկենտ տեղեկությունները: Մինչդեռ այդ տաճարները պետք է ապրած լինեին լիարժեք կյանքով, քրմությունն իր դերը պիտի կատարած լինեիր երկրի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում, դեր, որը հետո ժառանգեց քրիստոնյա հոգևորականությունը: Ի դեպ, վերջինիս նշանակությամբ կարելի է մոտավոր պատկերացում կազմել տաճարների ու քրմության՝ իր ժամանակ կատարած դերի մասին:

«Անհենական պատմությունների» ստեղծումը հորենացին հատկապես կապում է Արամազդ աստծու՝ Դարանաղյաց գավառի Անիում գտնվող տաճարի հետ, որտեղ, ինչպես հայտնի է, գտնվում էր հայ Արշակունի թագավորների տոհմական հանգստարանը²³: Այս տաճարը ժամանակին, ինչպես երևում է,

¹⁷ В. Т а р н, Эллинистическая цивилизация, М., 1949, էջ 266.

¹⁸ S. Smith, Babylonian Historical Texts, L., 1924; D. J. Wiseman, Chronicles of the Chaldean Kings (626—556 B. C.) in the British Museum, L., 1956.

¹⁹ P. Schnabel, Berossos und die babylonisch-hellenistische Literatur, Lpz.-Berl., 1923. Տե՛ս և И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 33 և հտ.:

²⁰ А. Б. Р а н о в и ч, Эллинизм и его историческая роль, М., 1950, էջ 35, 323:

²¹ հորենացի, I, 4, II, 13:

²² Strab., XI. 14. 16.

²³ Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես հորենացին, Երևան, 1966, էջ 62 և հտ.:

նշանակալից չափով հելլենականացման է ենթարկվել, որի մասին են վկայում Ազաթանդեղոսի հաղորդումն այդտեղ պաշտվող Արամազդի՝ Զևսի հետ նույնացման մասին, և հորենացու առավել որոշակի հաղորդումը՝ Սլիմպիական Զևսի հետ նույնացման մասին²⁴։

Անիի տաճարի գոյություն տարբեր ժամանակաշրջանների մասին տեղեկություններ են պահպանել, բացի Մ. հորենացուց²⁵, Փավստոսն ու Ազաթանդեղոսը։ Փավստոսը հաղորդում է, որ պարսիկները, առնելով Անին, քարուքանդ արին հայոց թագավորների այնտեղ գտնվող շիրիմները՝ սակայն ի վիճակի չեղան բանալու Սանատրուկ թագավորի՝ հսկայական քարերից կառուցված դամբարանը²⁶։ Ուրեմն Անին, որպես արքաների հանգստարան, գոյություն է ունեցել արդեն մ. թ. I դարի վերջերիներին—II դարի սկզբներին, երբ ապրել է Սանատրուկ թագավորը²⁷։ Ազաթանդեղոսը, ի թիվս Հայաստանի մի շարք հեթանոսական տաճարների, հիշատակում է և Անին ու նրա մեջ եղած Քազինն Զևս դիցն Արամազդայն, որը հիմնահատակ ավերվում է Տրդատ Մեծի կողմից²⁸։ Սակայն այս հաղորդումը բացի հասկանալի մեզ թույլ չի տալիս Փավստոսի մի այլ վկայությունը, ըստ որի Անիում է թաղվել նաև Տրդատի որդին ու հաջորդը՝ հոսրով Կոտակը (330—339 թթ.)։ «...Փոխելով լինելը քաջ արանցն աշխարհաշենն հոսրով, թագավորն Հայոց Մեծաց... և տարան առ իւր նախնիսն յԱնին յեկեղեցազուտոն Կարանաղեաց»²⁹։ Նույնը հաղորդում է և հորենացին³⁰։ Սա նշանակում է, որ հեթանոսական շրջանում թագավորների հանգստարան ծառայած Անին շարունակել է գործել նույն նպատակներով նաև քրիստոնեության շրջանում և, հետևաբար, Տրդատի օրոք լուրջ չի վթարվել կամ, համենայն դեպս, լրիվ չի ավերվել։ Անին շարունակել է շեն մնալ IV դարի կեսերին պարսիկների կողմից առնվելուց ու կողոպուտի ենթարկվելուց հետո էլ, քանի որ, ըստ հորենացու հաղորդման, 390 թ. մոտերքը այնտեղ պահվում էին Բյուզանդական Հայաստանի թագավոր Արշակ Գ-ի զանձները³¹։

Այսպիսով, եթե հեթանոսական Հայաստանում իսկապես, ինչպես հաղորդում է հորենացին, գրվել են «մեհենական պատմություններ», ապա Անին հենց այն սակավաթիվ տեղերից մեկն էր, որտեղ այդ պատմությունները, մեհենական դիվանի կազմում, կարող էին պահպանվել, թեկուզ մասամբ, և ի վերջո մանապարհ գտնել դեպի մեսրոպատառ գրականությունը, դեպի հորենացու «Պատմությունը»։

Այժմ դառնանք հորենացու՝ «մեհենական պատմություններին» վերաբերող տեղեկություններին և քննենք դրանք ըստ հիշատակման հերթականության։

հորենացու «Պատմության» երկրորդ գրքի գլուխներից 24-ը՝ 37-րդից մինչև 60-րդը, նվիրված են հայոց Արտաշես թագավորի պատմությանը։ Այս մեծ

24 Ազաթանդեղոս, 785, հորենացի, II, 14։

25 հորենացի, II, 12, 14, 38, 48, 54, 66, 77, III, 10, 27, 45։

26 Փավստոս, IV, 24։

27 Հ. Մանանդյան, նշվ աշխ., էջ 14 և հտ.։

28 Ազաթանդեղոս, 785։

29 Փավստոս, III, 11։

30 հորենացի, III, 10։

31 հորենացի, III, 45։

հատվածի մոտավորապես մեջտեղում, 48-րդ գլխի վերջում, կարգում ենք հետևյալ տողերը. «Եւ զայս մեզ ստուգապես պատմէ Ողիմպ քուրմ Հանույ, զրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում զործք զոր ասել կայ մեզ առաջի, որում և պարսից մատենաք վկայեն և հայոց երգք վիպասանաց»³²:

Խորենացին հայտնում է, այսպիսով, որ Օղյումպ քուրմի զործք թեև իր շարագրած՝ Արտաշեսի պատմության հիմնական աղբյուրն է, բայց ոչ միակը, որ ինքը օգտվել է նաև օժանդակ աղբյուրներից: Հիրավի, վերոհիշյալ երկու տասնյակից ավելի գլուխների աղբյուրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ հատվածը բարդ-շերտավոր կառուցվածք ունի, որ այնտեղ վարպետներն ի մի են բերված բազմաթիվ և տարաբնույթ աղբյուրների տվյալներ³³:

Բացի Օղյումպի պատմությունից, Խորենացուն աղբյուր են ծառայել, ինչպես ինքն է հայտնում, վիպասանների երգերը Արտաշեսի մասին, որոնց մատուցած տվյալները մեզ հետաքրքրող հատվածում մի սովոր շերտ են կազմում: Սրա կողքին առանձնանում են նախարարական տոհմերի ծագումնաբանական ավանդություններից եկող նյութերը: Առանձին շերտ են կազմում Խորենացու՝ իր աչքով տեսած քաղաքների, բերդերի, բնակավայրերի նկարագրությունները՝ կամ սրանց ավերակների հիման վրա մտովի արած վերականգնումները՝ դրանց հետ կապված ավանդությունների ու պատմությունների հետ միասին: Էական տեղ են գրավում այլևայլ հատուկ անունների՝ տեղանունների, անձնանունների, տոհմանունների իր իսկ տված ժողովրդական ստուգաբանության հիման վրա Խորենացու վերարտադրած պատմական դրվագները: Կան և ուրիշ աղբյուրների օրինակ՝ Դահնամակի հետքերը և այլն:

Ահա բոլոր այս օժանդակ աղբյուրներից եկող շերտերը մեկ-մեկ դատելով, ստանում ենք այն հիմնական շերտը, որը մեծ հավանականությամբ կարելի է վերագրել Օղյումպ քուրմի մեհենական պատմությանը: Այդ նյութը բաղկացած է մոտավորապես հետևյալ դրվագներից: Երվանդ բռնակալի գահակալումը՝ ի չքանցումն օրինավոր թագաժառանգ Արտաշեսի: Արտաշեսի հետապնդումը Երվանդի կողմից, նրա փախուստն ու պատսպարումը (կրած փորձություններից հետո) հարևան թագավորի մոտ: Նրա վերագարձը, գահի նվաճումը, Երվանդի սպանությունը: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշեսի արշավանքները, մասնավորապես, դեպի արևելք և դեպի հյուսիս: Թագադիր տապետ Սմբատի դերը Արտաշեսի ծավալած զործունեության մեջ: Արտաշեսի ներքին զործունեությունը, Կրա կատարած բարեփոխումները, հատկապես հուլարածան սահմանաքարերի հաստատումը: Տեղեկություններ Արտաշեսի որդիների մասին:

Որքան է հավաստի այս պատմությունը: Այս հարցը, իհարկե, ամենակարևորն է Խորենացուն աղբյուր ծառայած՝ Օղյումպ քուրմի «Պատմության» գնահատման զործում: Այստեղ մենք նախապես որոշ անակնկալի ենք հանդիպում: Խորենացին Երվանդին և Արտաշեսին համարում է հռոմեական կայսրրեներ Վեսպասիանոսի, Տիտոսի, Դոմիտիանոսի, Ներվայի, Տրայանոսի և Հադրիանոսի (իշխել են մ. թ. 69—138 թթ.) ժամանակակիցներ և նույնիսկ նկարագրում նրանց հարաբերություններից մի քանի դրվագ, մինչդեռ օտար պատմիչները, որոնք կամ ժամանակակից են վերոհիշյալ կայսրներին, կամ քիչ

³² Գ. Ն. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, գլուխ երրորդ, «Օղյումպ քուրմ, զրող մեհենական պատմություն»:

ալեի ուղ են ապրել (Տակիտոս՝ մ. թ. 55—120 թթ., Արրիանոս՝ մ. թ. II դար, Դիոն Կասսիոս՝ մ. թ. 155—235 թթ. և այլն), ուստի և աներկբայելիորեն ավելի հավաստի պիտի համարվեն, տալիս են նույն ժամանակի հայոց պատմության թեև բավական կցկտուր, բայց միանգամայն ուրիշ պատկեր: Բավական է նշել, որ հորենացու Երվանդի փոխարեն Տակիտոսը և մյուսները պատմաբան են հանում Տրդատ Ա Արշակունուն՝ հայ Արշակունիների հարստության հիմնադրին, և կամ հորենացու Արտաշեսի փոխարեն Տրայանոս կայսեր ժամանակակից են ցույց տալիս Պարթևաստի անունով հայոց թագավորին:

Դեռևս Հ. Մանանդյանը նշել է, մասամբ և ցույց է տվել³³, որ հորենացու «Պատմության» այս հատվածում արտացոլված է պատմական ուրիշ մի դարաշրջան, և ճիշտ չէ այս դեպքում ոչ թե հորենացու նկարագրությունը, այլ նրա ժամանակագրությունը: հորենացու մոտ հանգես եկող Արտաշեսը իրականում Արտաշես Ա-ն է, որն ապրել է մ. թ. ա. II դարի առաջին կեսում: Բայց նրա մասին իրեն հասած պատմությունը հորենացին սխալմամբ տեղադրել է մ. թ. I դարի վերջերին—II դարի սկզբներին, և ոչ միայն տեղադրել, կավելացնենք. այլև կասկածության մեջ է դրել այս ժամանակի գործիչների ու իրադարձությունների հետ:

Հետագա ուսումնասիրությունները լիովին արդարացրին այս տեսակետը և ցույց տվին, որ հորենացու մոտ հանգես եկող տվյալները ոչ միայն մ. թ. ա. II դարի առաջին կեսին են վերաբերում, այլև տալիս են դարաշրջանի շատ հարազատ պատկեր: Այդ պարզվեց, երբ հորենացու տվյալները մանրամասնորեն համեմատվեցին այդ ժամանակվա պատմությունը արտացոլող հավաստի աղբյուրների հաղորդածի հետ, որոնք են անտիկ պատմիչների պահպանած վկայությունները և իր՝ Արտաշես Ա-ի թողած վիմական արձանագրությունները³⁴:

Երվանդի և Արտաշեսի պայքարը արտացոլված ենք տեսնում հույն աշխարհագիր և պատմագիր Ստրաբոնի մոտ. «ա հաղորդում է, որ մ. թ. ա. III—II դդ. եզրին Հայաստանում թագավորում էր Սրոնտեսը (Երվանդը), որ զահարնկեց արվեց Արտաքսիասի (Արտաշեսի) կողմից և Արտաշեսը հռչակվեց Հայաստանի թագավոր»³⁵: Նույն Ստրաբոնի մոտ նկարագրված է Արտաքսատա (Արտաշատ) մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշես Ա-ի կողմից: Այդ մասին հաղորդում են նաև Պլուտարքոսն ու Դիոդորը³⁶: Ստրաբոնը պատմում է այնուհետև Արտաշեսի կատարած արշավանքների մասին՝ շորս ուղղությամբ՝ դեպի արևելք, որի ժամանակ միացվել է, ի թիվս այլոց, Կասպիանե երկիրը, դեպի հյուսիս՝ Վրաստան, դեպի արևմուտք և դեպի հարավ՝ որի ժամանակ զբաղվել է Տամորիտիս երկիրը³⁷: (հորենացին այդ արշավանքներից հիշատակում է, ինչպես ասվեց վերը, երկուսը՝ արևելյանը՝ դեպի Կասբից երկիրը և հյուսիսայինը՝ դեպի Վրաստան, իսկ Տամորիքի մասին հիշատակվում է նույն գլխում, որ Արտաշեսն այնտեղ նոր կառավարիչ նշանակեց)³⁸:

³³ Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հատ. Ա, էջ 124 և հտ.:

³⁴ Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., գլուխ երրորդ:

³⁵ Strab., XI, 14, 15.

³⁶ Plut., Luc., 31; Dio d., XXXI, 17a.

³⁷ Strab., XI, 14, 5.

³⁸ հորենացի, II, 53:

Խորենացու հաղորդումը Արտաշեսի կողմից երկրով մեկ հողաբաժան սահմանաքարեր հաստատելու մասին, որոնց նպատակն էր «զսահմանս զիդից և ազարակաց որոշել», իր համապատասխանությունն է գտնում արդեն վավերացրակտն տվյալների մեջ. մեզ հասել են այդ սահմանաքարերն իսկ (հինգ օրինակ), որոնք գիտնականները վերագրում են Արտաշես Ա-ին ոչ միայն այն պատճառով, որ նրանցից յուրաքանչյուրի վրա արամեերեն սառերով գրված է նրա անունը՝ «Արտաշես», այլև այնու, որ հնագրական տեսակետից դրանք անտարակույս վերաբերում են մ. թ. ա. II դարին³⁹:

Արտաշես Ա-ի նորոգյուտ մի արամեերեն արձանագրության մեջ հանդես է գալիս որպես նրա մերձավոր գործակից և օգնական «թագադիր» տիտղոս կրող մի անձնավորություն՝ Նիկեփոր (կամ Նեկփառ) անունով, որով զուգահեռ է ստեղծվում Խորենացու մոտ մանրամասն նկարագրված Արտաշեսի դայակ և զինակից «թագադիր ասպետ» Սմբատի հետ⁴⁰:

Խորենացու հիշատակած՝ Արտաշեսի որդիներից երեքի՝ Զարեհի, Արտավազդի, Տիգրանի պատմականությունը իր արձագանքն է գտնում անտիկ հեղինակներ Հուստինոսի և Ապոլիանոսի, ինչպես և Արտաշեսի արամեերեն արձանագրությունների տվյալների մեջ⁴¹ և այլն:

Մեծ համապատասխանություն ցուցադրող այս օրինակները բավարար հիմք են եզրակացնելու համար, որ Խորենացու մոտ հանդես եկող և նրա կողմից Օղյումայ բուրմին վերագրվող՝ Արտաշես յուզավորի պատմությունը իրապես Արտաշես Ա-ի պատմությունն է, և այն էլ ունի հավաստի ու ճշմարտացի լինելու բոլոր նշանները: Այստեղից էլ, իր հերթին, բխում է նրա վավերականության, այսինքն իսկապես մի հին ու ճշմարտապատում հեղինակի գրչին պատկանելու, ու քանի որ Խորենացին այդ հեղինակին անվանում է Օղյումայ բուրմ, ուրեմն և հենց Օղյումայ բուրմի գրչին պատկանելու մասին եզրակացությունը:

Այս թույլ է տալիս մեզ առաջ անցնել և դնել բոլոր այն հարցերը, որոնք կարող են ծագել որևէ պատմագրական երկի կապակցությամբ. այն է՝ հեղինակի օգտագործած աղբյուրների, նրա անձնավորության, ապրած ժամանակի, նրա կիրառած լեզվի հարցը: Իհարկե, առկա պարագաներում նման հարցեր զննելը անհամեմատ ավելի հեշտ է, քան նրանց պատասխանելը, բայց հարցադրումն իսկ ունի իր նշանակությունը:

Ինչո՞վ բացատրել Օղյումայի հաղորդումների և այլ հավաստի աղբյուրների շատ մեծ համապատասխանությունը Առաջին հերթին, ինչպես ակնարկվեց, նրանով, որ թե՛ այս և թե՛ այն արտացոլում են միևնույն դարաշրջանի պատկերը, միևնույն անձանց, իրադարձություններն ու երևույթները: Սա ինքնին հասկանալի է, մանավաճ, երբ խոսքը Արտաշեսի թողած արամեերեն արձանագրությունների տվյալների հետ եղած համապատասխանությունների մասին է: Սակայն երբ վերանում ենք այդ վավերագրական աղբյուրից, ապա մնացածի, այսինքն՝ անտիկ հեղինակների հաղորդածի հետ եղած համապատ-

³⁹ А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Арменни, ВДП, 1946, № 2, էջ 98 և հտ.:

⁴⁰ A. Perikhanian, Une inscription arménienne du roi Artashes trouvée a Zanguéour (Siwnik'), „Revue des études arméniennes“, N. S., tome III, 1966, էջ 18, 22 և հտ.:

⁴¹ Տե՛ս 2. Մ ա ն ա ն դ յ ա ն, Եղվ. աշխ., էջ 131 և հտ.:

առասխանությունների նկատմամբ հնարավոր է դառնում, բացի նշվածից, և սրա պահպանմամբ, նաև մի այլ լրացուցիչ ենթադրություն՝ այն է, թե գուցե Ողյումպի գրվածքի և սրանց միջև կա և աղբյուրագիտական կապ, նրանք, ասենք, ծագում են մեկը մյուսից, կամ երկուսն էլ՝ մի ընդհանուր աղբյուրից:

Այս տեսակետից հատկանշական է այն հանգամանքը, որ վերը հիշատակված աղբյուրների միջև շեշտակիորեն առանձնանում է Ստրաբոնը, որպես համապատասխանություն ցուցաբերող տվյալների ճշող մեծամասնության հեղինակ: Այս առումով, իհարկե, խիստ հետաքրքրական կլինեի պարզել, թե ինչ աղբյուրներից է օգտվել ինքը Ստրաբոնը Արտաշեսի մասին տեղեկություններ ժողովելիս: Կոնկրետ եզրակացությունը բացառվում է այն հանգամանքով, որ Ստրաբոնն այստեղ անուններ չի տալիս, բայց մոտավոր հետևություններ անել կարելի է:

Ստրաբոնը, ավարտելով հայերի ծագման մասին իր խոսքը, եզրափակում է՝ «Այս է հին ավանդությունը (ἡ γῆ — պատմությունը, բառացիորեն՝ բանը)», և շարունակում՝ «Իսկ դրա նորագույն (շարունակությունը) սկսած պարսիկներից հաջորդաբար մինչև մեր օրերը, պատշաճ է պատմել գլխավոր գծերով մինչև այժմ»⁴²: Այնուհետև Ստրաբոնը կես էջի վրա տալիս է Հայաստանի պատմությունը Արեմենյանների շրջանից մինչև իր ժամանակը, հիշատակելով նաև Արտաշես Ա-ին: «Գլխավոր գծերով» (ἐν ἡμετέροις) արտահայտությունը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ Ստրաբոնը իր ձեռքի տակ ունեցել է առավել ընդարձակ աղբյուր կամ աղբյուրներ, որոնցից էլ հնարավոր է եղել վերցնել ցանկացածը: Որ սա սոսկ ենթադրություն չէ, այլ իրողություն, ապացուցվում է այն հանգամանքով, որ Ստրաբոնը, նույն գրքի մի այլ բաժնում առնելով իր պատմածից մի գրված՝ Արտաշեսի (և նրա ընկերակից Ջարեհի) նվաճումների գրվածքը, տալիս է այն առավել հանգամանորեն, ներածելով այն «պատմում ևն» (ἱστορίαν) արտահայտությամբ⁴³:

Անհավանական չէր թվա, որ Ստրաբոնի այս ակնարկած աղբյուրը, որի մեջ, ինչպես երևում է նրա քաղածից, մանրամասնորեն բնութագրվել են Արտաշեսի արշավանքները և դրանց արդյունքները, թվարկվել այդ կապակցությամբ քսանից ավելի տեղանուններ և ցեղանուններ՝ ծագած լինել հայկական հողի վրա, եթե միայն պարզվեր, որ այդ ժամանակ Հայաստանում նմանօրինակ գործեր ընդհանրապես ստեղծվել են:

Եթե այս կապակցությամբ նորից մտաբերում ենք այստեղ Մետրոդորոս Ֆլեպիսիացու՝ Տիգրան Մեծի պատմությանը նվիրված երկը, որը կարող էր և Արտաշեսին շոշափող ներածական մաս ունենալ, և կամ քիչ ավելի ուշ գրված Արտավազդի պատմությունները, ապա այդ անում ենք ոչ թե պնդելու համար, թե հենց սրանք են Ստրաբոնին աղբյուր ծառայել, այլ միայն ցուցադրելու համար, թե որպես Ստրաբոնի աղբյուր նկատվող երկի կա՞նք երկերի նման երեւելիքներ իսկապես կարող էին գոյություն ունեցած լինել մ. թ. ա. I դարի Հայաստանում, և Ստրաբոնն էլ, որ հեռվից չէր գրում Արևելքի մասին, այլ շատ մերձ էր, նրան թե՛ իր ծագմամբ (Պոնտոսի Ամասիա քաղաքից), և թե՛ կատարած շրջագայություններով, կարող էր դրանք որպես աղբյուր օգտագործել:

⁴² Strab., XI, 14, 15.

⁴³ Նույն տեղում, 5:

Եթե այդպես է, ապա կարելի է հաջորդ քայլն անել, ենթադրելով, թե Օղյումայ բուրմի՝ Արտաշեսին նվիրված պատմությունը վերջին հաշվով, միջնորդված ձևով, կարող էր իր ակունքն ունենալ նույն այդ՝ Ստրաբոնին աղբյուր ծառայած երկի մեջ։ Սրանով կբացատրվեն Օղյումայի և Ստրաբոնի հաղորդածի աներկբայելի նմանությունները, և կամուրջ կձգվեր հին հայկական արքունի և մեհենական պատմագրությունների միջև։

Պարզ է, որ մեր այս էքսկուրսը պատկանում է այն հարցերի թվին, որոնց մասին ասվեց, թե նրանք շատ ավելի հեշտ և ղենել, քան լուծելի։ Բայց անկախ այդ աղբյուրագիտական կապերի ու առնչությունների հավաստիությունից կամ անհավաստիությունից, փաստական նյութերով զծագրվում է հայ նախամեսորոպյան պատմագրության արգասիքներից մեկը՝ «մեհենական պատմությունների» մի նմուշ, Օղյումայ բուրմի՝ Արտաշես Ա-ին նվիրված մի պատմական երկ, որ գրվել է հավաստի աղբյուրների հիման վրա, և այնուհետև աղբյուր ծառայել Մովսես Խորենացուն։

Ինչ կարելի է ասել Օղյումայ բուրմի անձնավորության մասին։ Օղյումայր եղել է, ինչպես արդեն գիտենք, Դուրանալլաց Անիի Արամազդի տաճարի բուրմ։ Նրա անունը, որ անշուշտ հունական *Ὀλυμπός* (Օլյումպիոս)-ի հայացված ձևն է, ամենևին չի նշանակում, թե դրա կրողը հույն է եղել։ Հունական անունները լայնորեն տարածվել են հելլենիստական շրջանում տարբեր ազգերի մեջ, և մենք ունենք այդ ժամանակից եկող, օրինակ, Անդոք-Անտիոք՝ *Ἀνδοχός*, Սլուկ՝ *Σλευχός*, Նիկեփոր՝ *Νικεφόρος*⁴⁴ և այլ անունները, որոնք կրել են հայ մարդիկ։ Այդ անունը, սակայն, խոսում է տաճարի որոշ շափով հելլենականացված լինելու մասին։

Օղյումայ անվան մասին վաղուց կարծիք է հայտնվել (Գուտշմիդ), թե նա կապ ունի այն հանգամանքի հետ, որ Անիի տաճարում պաշտվող Արամազդը նույնացված է եղել հունական Զևսի և այն էլ վերջինիս տարբերակներից մեկի՝ Զևս Օլիմպիականի (*Ζεύς Ὀλυμπιος*) հետ։ Ահա, եթե Ողյումայ-Օլյումպիոս անունը կապվի Զևսի այդ մականվան հետ, և այսպիսով պարզվի, որ դա անուն-տիտղոսի նման մի բան է եղել, ապա կարելի է ենթադրել, որ Օղյումայը ոչ թե սոսկ բուրմ, այլ Արամազդ-Զևս Օլիմպիականի տաճարի բրմապետ է եղել։

Երբ է ապրել նա։ Դժվարին հարց է, և դրա պատասխանը մենք առայժմ տալ չենք կարող։ Կարելի է միայն ասել, որ Օղյումայն ապրել է մ. թ. II դարից ոչ ուշ, քանի որ նա, ըստ Խորենացու, նախորդել է «մեհենական պատմությունների» մի ուրիշ հեղինակի՝ Բարդաժանին։

Սակայն նախքան Բարդաժանին անցնելը հարկ է զեթ հարցադրման կարգով շոշափել Խորենացու «Պատմության» ևս մի դրվագ, որն իր բնույթով ջատ է նման քննարկված դրվագին։ Խոսքը Տիգրան Երվանդյանի պատմությանը նվիրված գլուխների մասին է [I, 24 (25)—31 (32)]։ Այս հատվածը, նրա աղբյուրների առումով, մանրամասն վերլուծության է ենթարկվել Մանուկ Աբեղյանի կողմից⁴⁵։ Մ. Աբեղյանի եզրակացությունները հետևյալն են.

⁴⁴ A. Perikhanian, նշվ. աշխ., էջ 231.

⁴⁵ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմության մեջ, Վաղարշապատ, 1901, էջ 379—510.

1) «Խորենացին Տիգրանի պատմությունը Մար Աբասից չի առնում: Նա երկու տեղ հիշում է, որ այդ պատմությունը առնում է մի գրավոր աղբյուրից, որի հեղինակի անունը, ծանոթ ենթադրելով, չէ տալիս: այլ բավականանում է միայն նորան գովելով: Տիգրանի պատմության մեջ հիշած «ասէ», «ասէ որ պատմէն», «ասում է պատմողը» խոսքերը վերաբերում են այդ հեղինակին: Այդ գրվածքը, որ Խորենացին կոչում է «Հիստուն պիտոյից» կամ «Պատմութիւն հիսման պիտոյից», եղել է մի բանահյուսական ու ճարտասանական գրվածք, հավանորեն, շորս հագներգութեան» բաժանված: Խորենացին անձամբ չի օգտված յուր հիշած ժողովրդական երգերից, այլ յուր աղբյուրի հեղինակն է ճարտասանորեն մշակել ժողովրդական բանաստեղծությունը» (էջ 445): Այդ աղբյուրը հղել է «մի ընդարձակ ներբողյան հայոց թագավոր Տիգրանի մասին» (էջ 433): Նրան հիմք է ծառայել «ժողովրդական երգը, որ գարեր շարունակ բերնեբերան անցնելով, ամենավաղը Ե դարում գրված պիտի լինի» (էջ 477):

2) Պատմությունը վերագրված է Տիգրան Երվանդյանին, որը Խորենացու ասելով, «յուրոսի բամանակակիցն էր (VI դար մ. թ. ա.), բայց իրականում «ամենայն, ինչ որ նա ասում է՝ իսկապես Մեծն Տիգրանին է վերաբերում» (էջ 448): Այս թեզին, որ առաջ է քաշել դեռևս Հ. Գեղեցիկը⁴⁶, Մ. Աբեղյանը ընդարձակ հիմնավորում է տալիս, համեմատելով Տիգրան Երվանդյանի մասին Խորենացու ասածը Տիգրան Բ-ի մասին աղբյուրների հաղորդածների հետ: (Մի երկու նմուշ այդ հիմնավորումից: Տիգրանը, ըստ Խորենացու, նվաճել է հույներին: Մ. թ. ա. VI դարի համար դա միանգամայն անիմաստ է. խոսքը անշուշտ Տիգրան Մեծի մասին է, որը նվաճեց Սելևկյանների տերությունը, Կիլիկիայի, Կապադովկիայի հելլենիստական քաղաքները և դրանց բնակչության մի ստվար մասը բերեց ու բնակեցրեց հայկական քաղաքներում: Ըստ Խորենացու Տիգրանը հիմնել է Տիգրանակերտ քաղաքը. սա ևս առանց կասկածի վերաբերում է Տիգրան Բ-ին: Ըստ Խորենացու Տիգրանն իր քրոջը՝ Տիգրանուհուն, կնություն է տվել մարաց թագավորին. հայտնի է, որ Տիգրան Բ-ի դուստրը ամուսնացած է եղել մարաց թագավորի հետ. անունն անհայտ է, բայց կարող էր Տիգրանուհի լինել և այլն, և այլն: Զուգահեռները բազմաթիվ են ու համոզիչ): Այս պատմությունը, եղրափակում է Մ. Աբեղյանը, «պետք է հանել այն տեղից, ուր կա Խորենացու պատմության մեջ, և գնել յուր իսկական տեղում: Երգն ու գովեստը Պոմպեոսի ժամանակակից Տիգրանի, ըստ Խորենացու Մեծին Տիգրանի վրա է եղել, նորա վրա էլ պետք է պատմել այսուհետև: Եվ ալսպիսով Խորենացու պատմությունը, «որ յաղագս Մեծին Տիգրանայ»... ստանում է իր իսկական պատմական արժեքը և միանգամայն այդ պատմությունը դառնում է Խորենացու Հայոց պատմության կարևոր մասերից մեկը: Երգը մեծ արդյունավետ, պահել է Մեծն Տիգրանի պատմությունը» և այլն (էջ 474):

Մեծանուն հայագետի այս եզրահանգումները, մեր կարծիքով, ի ճշոր, արմատական, սկզբունքային նշանակություն ունեն ոչ միայն Տիգրանին վերաբերող հատվածի ըմբռնման, այլև ընդհանրապես Խորենացու «Պատմության» գնահատման, ինչպես և օգտագործման եղանակի մշակման համար, ու մանավանդ թանկարժեք են եղել գրվելու ժամանակ, XIX դարի վերջերին, որպես հակահարված Խորենացու երկի դերբննադատական ընկալման: Եվ մենք իհար-

⁴⁶ Հ. Գեղեցիկ, Համառոտ պատմություն հայոց, Վիեննա, 1897, էջ 9—10:

կի համամիտ ենք հեղինակի հիմնական թեզերին. ա) որ հորենացին Տիգրանի պատմության համար ունեցել է գրավոր աղբյուր՝ մի ներբողյուն, բ) որ այդ պատմության մեջ հանգես եկողը իրապես ոչ թե Տիգրան Երվանդյանն է (VI դար մ. թ. ա.), այլ Տիգրան Բ-ը (այստեղ մի փոքր վերապահությամբ. Տիգրան Բ-ը իհարկե ձնշող գերակշռություն ունի, բայց նրա կերպարին խառնված ենք տեսնում նաև Երվանդյանի որոշ իրական գծեր)⁴⁷:

Մեծ դիտողությունները վերաբերում են հորենացու՝ Մ. Արեղյանի կողմից վերակենդանացված այդ գրավոր աղբյուրի բնույթին: Արեղյանի կարծիքով ժողովրդական երգն է, որ «գարեւ շարունակ բերնե-բերան անցնելով, ամենավաղը Ե դարում գրված պիտի լինի»: Այս ասվում է ներքին այն համոզմունքով, որ Տիգրան Բ-ի մասին տեղեկությունները իր ժամանակից մինչև V դար կարող էին հասնել ոչ այլ կերպ, քան միայն բանավոր ուղիով, ժողովրդական երգի միջոցով: Գնահատելով այդ երգը, Արեղյանն ասում է. «Երգը մեծ ճշտությամբ պահել է Մեծն Տիգրանի պատմությունը»: Եվ այս ասում է ի ամփոփումն բազմաթիվ իր իսկ ցուցադրած համապատասխան համոզիչ փաստերի: Բայց հնարավոր է արդյոք, որ երգը, կես հազարամյակ բերնե-բերան անցնելով, այսուհանգերձ, ճշտությամբ պահեր Տիգրանի պատմությունը: Հանրահայտնի մի այլ դեպքում, Սասունցի Դավթի դեպքում, օրինակ, մենք հակառակն ենք տեսնում (մի բան, որ նշել է ինքը՝ Արեղյանը) և այս, ըստ երևույթին. ավելի օրինաչափ է ժողովրդական երգի համար: Երգն այս պարագաներում, այն չափով, ինչ չափով հորենացին այն վկայակոչում է, ծառայած պիտի լինի նրա համար որպես օժանդակ աղբյուր, ի լրումն Արեղյանի նշած հիմնական գրավոր աղբյուրի, ձիշտ այնպես, ինչպես տեսանք Արտաշեսի դեպքում:

Արեղյանը համոզված է նաև, որ իր դրած աղբյուրը գրվել է V դարում, այն էլ ամենավաղը: Այո, եթե դա գրվել է հայերեն: Բայց ինչո՞ւ անպայման հայերեն, եթե վերը նշված հիմքերով խզելի համարենք նրա կախումը ժողովրդական երգից, եթե համարենք, որ այն ի սկզբունք ինքնուրույն ստեղծագործություն է եղել: Ինչո՞ւ այն չի կարող գրված լինել մի այլ լեզվով և, ասենք, թարգմանված լինել հայերեն V դարում: Աղբյուրի՝ Արեղյանի կողմից գծած պատկերը՝ ճարտասանական կանոններով կառուցած ներբողյան, քիչ է ասել, թե չի հակասում նրա սկզբնապես հունարեն գրված լինելուն, ավելի շուտ նա հուշում է այդ: Եվ խնդիրն այն է, որ Տիգրանին նվիրված հունարեն գրված պատմության, այն էլ, ըստ երևույթին, հենց ներբողյանի բնույթ էրող պատմության մասին, շարադրված Տիգրանի իսկ օրոք, մենք հավաստի տեղեկություններ տեսնենք⁴⁸: Ինչո՞ւ նույնպիսի մի գործ չէր կարող ստեղծվել Տիգրանի և մ. թ. V դարի միջև ընկած դարերից մեկում, Տիգրանին ժամանակով ուղիղ այնքան մոտ, որքան հարադատություն ու հավաստիություն կա նրա մեջ պահպանված տեղեկություններում, այսինքն ոչ շատ մոտ, բայց և ոչ հեռու: Աստվածաշնչի լոցուն օրինակը պիտի համոզի մեզ, որ կան գործեր, որոնք նախքան հայերեն

47 Ս. Ս. Երևան, Հայկական առաջին պետական կազմավորումները (VII—VI դդ. մ. թ. ա.), «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 104 և հտ., և Դ. Ա. Տիրացյան, Հին հայկական պետության առաջացումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 94 և հտ.:

48 Ի դեպ, հետաքրքրական է, որ տեղեկություններ կան Մետրոդորոսի մի այլ՝ «Անրան կենդանիների բանական լինելու մասին» երկի հայերեն թարգմանված լինելու մասին: Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 11:

Քարգմանված ու մեսրոպատառ հանգես գալը շրջանառության մեջ են եղել: Նախամեսրոպյան Հայաստանում իրենց նախնական վիճակով: Այդպիսին կարող էր լինել նաև Տիգրանի մասին ներբողյանի բախտը⁴⁹:

Վերադառնանք այժմ «մեհենական պատմություններին» և նրանց հեղինակներին Երկրորդին՝ Բարդաժանին:

Բարդաժանը (Բար-Դաժանը) այնքան հայտնի անձնավորություն է, որ կարիք չկա այստեղ նրան երկարորեն բնութագրել: Ասորական եկեղեցու և մշակույթի խոշորագույն գործիչներից ու հիմնադիրներից մեկն է: Մնվել է 154 թ. Եղեսիայում, մահացել 68 տարեկան հասակում: Նրա ժամանակակից Հիպոլիտեսը նրան հայ է անվանում, թերևս ունենալով որոշակի հիմք⁵⁰: Գրել է, իհարկե, ասորերեն, բայց նրա գրվածքները անմիջապես թարգմանվելիս են եղել հունարեն՝ նրա աշակերտների կողմից⁵¹: Բարդաժանի հետևորդները հետզհետե հռոացել են եկեղեցուց, այնպես որ ինքն էլ հաջորդ սերունդների կողմից աղանդավոր է համարվել: Բարդաժանը եղել է Եղեսիայի թագավոր Աբգար IX Բար Մանուի մոտիկ բարեկամներից մեկը⁵²:

«...Նա (Բարդաժանը) այստեղ (Հայաստան) եկավ,— պատմում է Խորենացին,— հուսալով, թե կկարողանա մեր վայրենի հեթանոսների մեջ հետեւորդներ գտնել: Բայց երբ նրան չընդունեցին, անցավ Անի ամրոցը և ընթերցելով մեհենական պատմությունը, որի մեջ գրված էին նաև թագավորների գործերը, ավելացրեց իրենը և իր ժամանակի անցքերը և փոխադրեց բոլոր ասորերեն լեզվի: Հետագայում այն թարգմանվեց հունարեն լեզվով... Այս պատմությունից առնելով մենք վերապատմեցինք քեզ Արտավազդի թագավորությունից մինչև Խոսրովի տրձան (կանգնեցնելը)»⁵³:

«Մեհենական պատմությունների» Բարդաժանին վերագրելի հատվածի ընդգրկման մասին, այսպիսով, ունենք հետևյալ ցուցումները՝ թե նա ավելադրեց եղածի վրա թիւր և որ ինչ առ իւրեան», և որ նա գրել է «ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»: Այստեղ որոշ հակասություն կա, որ տարակուսանքի տեղիք է տալիս: 154 թ. ծնված Բարդաժանի համար «որ ինչ առ իւրեան» անցքերը կարելի է համարել, ասենք, II դարի վերջին երրորդը և III դարի սկզբները, իսկ չէ՞ որ Արտավազդի թագավորությունը ըստ Խորենացու ընկնում է մ. թ. 129—130 թթ. միջև⁵⁴: Տարակուսանքն ուժեղանում է, երբ ուշադրությամբ վննում ենք Արտավազդին վերաբերող գլուխը (II, 61). այստեղ ամեն ինչ առած է ժողովրդական երգերից («գողթան երվիչներ», «պառավներ», «ոմունք»), որոնք Խորենացին «ճշմարտութեամբ» է գլխի

49 Հետաքրքրական խնդիր է նաև պարզել Տիգրանին նվիրված մի այլ ներբողյանի, Հ. Մանանդյանի կարծիքով՝ VII դ. պատկանող («Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928, էջ 221 և հտ.) «Դաթեան բերթութիւն որ յաղագս Տիգրանայ» գրվածքի (Н. А до н. э. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 128—129, 132) առնչությունը Խորենացուն աղբյուր ծառայած «չորս հագներգությունների» և Խորենացու իսկ շարադրանքի հետ:

50 Ե. Գ. Տեր-Միսասյան, Միջնադարյան աղանդների ծագման ու զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 56:

51 A. Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, էջ 12 և հտ.:

52 Նույն տեղում:

53 Խորենացի, II, 66:

54 Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 70:

սկզբում և վերջում⁵⁵ Այստեղ տեղ չկա Բարգաժանից առած նյութի համար: Հաջորդ գլուխը (II, 62), որը նվիրված է Տիրան թագավորի գործունեության նկարագրությանը, ևս, պետք է ասել, չի ցուցաբերում Բարգաժանին վերագրելի նյութեր: Իր աղբյուրներն այստեղ հորենացին վկայակոչում է «պատմին», «ասեն» բառերով: Տրդատ Բաղրատունու դրվագն էլ տիպիկ տոհմական ավանդություն է, որ բանավոր կերպով հաղորդվել է սերնդից-սերունդ այդ նախարարական տան մեջ:

Ի տարբերություն սրանից, Բարգաժանին վերագրվող պատմության հատվածի մյուս ծայրը ոչ մի տարակույս չի հարուցում: Այստեղ հիշատակվում է հոսրովի կանգնեցրած արձանը: Այս, ըստ հորենացու պատմածի, վերաբերում է 213 թ. գահակալած հոսրովի թագավորության սկզբներին, որը միանգամայն հարմար ժամանակ է Բարգաժանի՝ Հայաստան այցելելու համար⁵⁶:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Բարգաժանի կապակցությամբ «մեհենական պատմությունների» լեզվի մասին արված հորենացու ցուցումը: Այս հարցը, անշուշտ, նախամեսրոպյան շրջանի մշակույթի կարևորագույն խնդիրների թվին է պատկանում և առանձին ուսումնասիրություններ է պահանջում, որոնք չեն կարող տեղավորվել ներկա հոդվածի շրջանակներում: Նշենք միայն, որ հորենացու ցուցմամբ, որպես «մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու բացատրվում են հունարենն ու ասորերենը, և հաստատվում է, ըստ երևույթին, հայերենը: Նման անսովոր գրույթում իրականում աներևակալելի բան չկա, եթե գրավոր հայերենի օգտագործման բլոտը նախամեսրոպյան շրջանում սահմանափակված համարենք միմիայն մեհյաններով ու քրմության միջավայրով⁵⁷: Որ հայերենով գրելու փորձեր ընդհանրապես արվել են նախամեսրոպյան շրջանում, դրա ապացույցն են, օրինակ, ալսպես կոչված «Դանիելյան նշանագրերի» մասին մեղ հասած տեղեկությունները⁵⁸:

Միևնույն ժամանակ, հակառակ հորենացու ցուցման, ամենևին օրակարգից դուրս չի մղվում հունարենի կամ նույնիսկ արամեերենի հարցը: Սրանց որպես «մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու լինելու հավանականությունն էլ հենված է մ. թ. I—II դարերի հայոց (նաև հարևան վրաստանի) լեզվաբաններից մեղ հասած հանրահայտ հունարեն, ինչպես նաև արամեերեն⁵⁹ արձանագրությունների գոյության փաստի վրա: Խնդիրը մնում է բաց և սպասում ներ նյութերի և հետազոտությունների:

Հայագիտության մեջ առ այսօր նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրության ողջ բնագավառի և նրա հարուցած խնդիրների ուսումնասիրությունը ըստ էության փոխարինված է եղել մեկ ղեմրի, Մար Աբաս Կատինայի ու նրա առեղծվածի շուրջը կատարվող հետազոտություններով:

⁵⁵ Տե՛ս Մ ո վ ս ե ս հ ո ռ ե ն ա ց ի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 300, ծան. 198 (Ստ. Մախասյանցի):

⁵⁶ հ ո ռ ե ն ա ց ի, II, 65: Հմմտ. Ե. Գ. Տ ե ռ-Մ ի ն ա ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 56:

⁵⁷ Հմմտ. Գ. Խ. Ս ա ռ ց յ ա ն, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 30 և հտ.:

⁵⁸ Հմմտ. Գ. Ս ե ա կ, Մեսրոպ Մաշտոց, Հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը, Երևան, 1962, էջ 23 և հտ.:

⁵⁹ А. Г. Перхання. Арамейская надпись из Гарни. «Պատմա-բանասիրական հանգես», 1964, № 3, էջ 123 և հտ.: Г. В. Перетели. Армазская билингва, Тбилиси, 1941 և այլն:

Մար Աբասը՝ Կատինա մականվամբ, հանդես է գալիս խորենացու «Պատմության» մեջ, որպես մ. թ. ա. II դարի վերջերում ապրած մի հեղինակ, որի մատյանից մեծապես օգտվել է խորենացին, ինչպես հենց ինքն է նշում: Հայադիտության մեջ եռանդուն կերպով (և իրավացիորեն) բացասվել է բազմաթիվ ուսումնասիրող Մար Աբասի մ. թ. ա. II դարի հեղինակ լինելու հնարավորությունը, և այդ կապակցությամբ (արդեն անիրավացի) հաճախ ժխտվել նրա ու իր մատյանի գոյության իսկ փաստը: Մի ուրիշը, Անանուն հեղինակ, որի գործը հասել է մեզ VII դարի պատմիչ Սեբեոսի «Պատմությանը» կցված վիճակում, որպես իր գործի աղբյուր հիշատակում է Մարաբա Մծուրնացուն, որը, ելնելով Անանունի մոտ հանդես եկող տվյալներից, ապրած պիտի լինի մ. թ. IV դարում:

Խորենացու Մար-Աբաս Կատինայի և Անանունի՝ Մարաբա Մծուրնացու սնձնավորությունների նույնությունը հետևում է ոչ միայն նրանց անունների նույնությունից (խորենացու մոտ՝ հունական ս վերջավորությամբ), այլև նրանց վերադրած գործերի նույն շրջանակներից ու բնույթից: Միևնույն ժամանակ Անանունի տվյալներից հառնող թվագրությունը՝ IV դար, միանգամայն բավարար և համոզիչ է երևում⁶⁰, և այն ընդունելու դեպքում ծագում է միայն բանասիրական խնդիր՝ բացատրել, թե ինչու IV դարի մատենագիրը խորենացու մոտ հանդես է գալիս որպես մ. թ. ա. II դարում ապրած դեմք: Բայց ինչպես տեսանք վերը, սա առաջին այդ տիպի խնդիրը չէ, որ հարուցում է մեր առջև խորենացին:

Մարաբայի մատյանը, որ մեզ չի հասել, պարունակել է, դատելով նրանից օգտված հեղինակների՝ Մովսես խորենացու, Անանունի և VI դարի հույն պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու⁶¹ տվյալներից, հետևյալ մասերը. հնագույն առասպելներ Հայկ ու Բելի, Արա և Շամիրամի և այլն, որոնցում պահպանվել են հեռավոր հիշողություններ հայ ժողովրդի ծագման ու պատմության նախնական փուլերի մասին. որոշ տեղեկություններ պարթև Արշակունիների սկզբնավորման և նրանց ճյուղավորում հանդիսացող՝ հայ Արշակունիների Հայաստանում հաստատման վերաբերյալ. տեղեկություններ Արշակունիների երկու այս ճյուղերի ներկայացուցիչների շարքերի մասին: Մարաբայի մատյանի լեզուն ամենայն հավանականությամբ հունարենն է եղել: Այդ է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ նրանից օգտված պիտի լինի հույն Պրոկոպիոս Կեսարացին⁶²:

Մարաբայի պատմության աղբյուրները միայն մոտավոր կերպով կարելի է նշել: Անշուշտ, նաև մեծապես օգտվել է ժողովրդի կենդանի հիշողությունից, որը արտացոլված է եղել բանահյուսության մեջ. այստեղից է առել նա իր մատյանի առասպելական մասը: Բայց ունեցել է և գրավոր աղբյուրներ, ըստ երևույթին, նաև ինչ-որ հունական ժամանակագրական աղբյուր՝ պարթև Արշա-

⁶⁰ Н. Марр, О начальной истории Анонима, «Византийский временник», I, вып. 1, № 293 և հա. Կ. А. Манандян, Начальная история Армении Мар Абаса (К вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского и Прокопия Кесарийского), «Палестинский сборник», вып. 2 (64—65), № 74 և հա.

⁶¹ De aedificiis, III, 1.

⁶² Н. Адонц, «Начальная история Армении» у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, «Византийский временник», VIII, 1901, 1—2, № 96, Կ. А. Манандян, նշվ. աշխ., № 76.

կունինների՝ իրենց անկախացման համար մղած պայքարի վերաբերյալ: Պարթև և հայ Արշակունի գահակալների շարքերի վերաբերյալ իր տեղեկությունների աղբյուրի մասին վկայությունը տրված է եղել հենց իր՝ Մարաբայի կողմից և հասել է մեղ Անանունի գրվածքում: Այստեղ Մարաբան, եթե հավատալու լինենք նրան, օգտվել է վիմակալի մի արձանագրության սուլյալներից, Ագաթանգեղոսի, կամ Կեղծ-Ագաթանգեղոսի այն արձանագրության, որի մասին վերը խոսք եղավ: Իսկ քանի որ ինքը՝ այդ Ագաթանգեղոսը, հայտարարելով արձանագրության մեջ իրեն Տրգատ Գ-ի ժամանակակից, հայտնում է, որ տվյալներն առել է արքունի դիվանից, ապա և Մարաբայի աղբյուրների թվին են դասվում նաև դիվանները:

Հիրավի, ազգով ասորի, ինչպես ցույց է տալիս նրա անունը, ուրեմն և իր մայրենի լեզվի, թերևս նրա կողքին և այլ սեմական լեզուների գիտակ, մծուրնացի, ուրեմն և ըստ էության հայ և հայոց լեզվի ու մշակույթի մեջ հմուտ, հունարեն մատյանի հեղինակ, ուրեմն և քաջ հունագետ, Մարաբան շատ հարմար անձնավորություն է՝ դիտվելու համար որպես ժողովրդին ունկնդրող, մատյանների մեջ խորասուզվող, արձանագրություններ ընթերցող և դիվաններ հետախուզող հեղինակ:

Բերված նյութերը բացահայտում են այն փաստը, որ հին Հայաստանում պատմագիտական մտքի զարգացման անընդմեջ շղթա է գոյություն ունեցել, որի առայժմ նշմարելի սակավաթիվ օղակներն իսկ ընդգրկում են 500-ամյա մի շրջան. Մետրոդորոս և Արտավազդ՝ մ. թ. I դար:—Տիգրանի ներբողյանի հեղինակ և Օղյումպ պատմագիր՝ մ. թ. I-II դարեր:—Բարդաժան՝ III դար:—Մարաբա Մծուրնացի՝ IV դար: Սա հայ պատմագրության նախնական շրջանն է:

ДОМЕСРОПОВСКАЯ АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ

Доктор историч. наук Г. Х. САРКИСЯН

(Резюме)

Установившееся в начале IV в. в Армении в качестве официальной религии христианство сыграло существенную роль в дальнейшей жизни армянского народа. Вместе с тем в процессе его утверждения многие достижения дохристианской армянской культуры оказались утраченными либо сильно пострадали. Задача исследователя—найти пути к восстановлению этих культурных ценностей, хотя бы и частичному.

Настоящая статья является попыткой воссоздать на основе имеющихся в античной литературе данных, а также сохранившихся в раннесредневековой армянской литературе материалов суммарную картину развития на армянской почве историографии в период, предшествовавший изобретению армянских письмен.